

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелкъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարուած են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Էջմիածնի սինոդի անդամ գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան, այս-
տե հրաւիրում է պ.պ. զաւառական ծխական պատգամաւորներին կանխապէս ներկա-
յանալ նորին սրբազնութեանը և ստանալ հրաւիրութեամբ, որով ամսոյս 22-ին անար-
գել մուտ գործեն ընտրութեան դահլիճը և մասնակցեն Թիֆլիսի թեմական պատգամա-
ւորի ընտրութեանը:

1—1

ՀԱՄԱՅՈՒՆ ՀԵՌԱՐԻ ՍԻՆՈԳԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ, վրաստանի և Իմերէթի
հայոց վիճակային կոնստանտինոպոլիս յայտնում է, որ մարտի 8-ին եղեալ ընտրութիւնը
Տիֆլիսի վիճակի պատգամաւորի ոչնչացուցեալ է Սինոդի օրագրութեամբ, և նշանակած
է ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ վիճակային պատգամաւորի սոյն ԱՊՐԻԼԻ 22-ին, նախագահութեամբ
Սինոդի անդամ Աղուանեանց սրբազան եպիսկոպոսի Ուստի հրաւիրութեամբ ընտր-
ական ներկայացուցիչք եկեղեցեաց ներկայանալ ընտրութեանը: Նոր ընտրութեանը պար-
տին մասնակցել առաջին անգամ ընտրեալ ներկայացուցիչք եկեղեցեաց Հաւաքարի ԼՈՒ-
ՍԱՒՈՐԶԻ, ԷՋՄԻԱԾՆԵՑԻՈՑ սուրբ Գեորգի և ԿՈՒՄԻՍՈՒ գործակալութեան: Այն ընտրողը,
որոնք որ և իցէ պատճառով չեն կարող ներկայանալ ապրիլի 22-ի ընտրութեանը, Ի-
րաւունք ունեն իրանց ձայնը նորոգ ընտրելի վիճակային պատգամաւորի մասին՝ տալ
ուրիշ լին վաւերացուցեալ հաւատարմութիւնով:

Անդամ կոնստանտինոպոլիսի Ղ.Է.ՆՈԳ աւագ քահանայ Խարազեան

(№ 42)

3—3

ՆՈՐ ԲԱՅՈՒՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՆՕՏԱՐ

ԳՐԻԳՈՐԻՆԵՎԻ

գրասենեակը, որը գտնուում է Սոյալական փողոցի վրա, Գուրգենովի տներում:

(№ 44)

1—3

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ բան է կուսակցութիւնը.—նրբին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ, «Բարձրագոյն» վարժանքներից, վիճ-
նայի երաժշտական ցուցահանդիսի առիթով: Նա-
մակ Պետերբուրգից. Նամակ Արասթումանից.
Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Միլիտարական ճգնաժամ խա-
ղապան Պարսկաստան.—ՀԵՌԱՐԻ ՍԻՆՈԳԻ.—ԲՈՐՈՒՄ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Սար-
գիս Սարգսեան:

ԻՆՉ ԲԱՆ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Աշխարհահռչակ շէյքարացի իրաւագէտ
Բորչուլի իր «Character und Geist der
politischen Parteien» գրքի մէջ ասում է,
որ միայն այն երկրներում, որտեղ տիրում
է կատարեալ անտարբերութիւն զգալի հա-
տարակց կեանքը, այնտեղ միայն չը կան
կուսակցութիւններ: Հարկ չը կայ, որ կու-
սակցութիւնները, ծնունդ առնելով մտաու-
րապէս և բարոյապէս արթնացող մի ազգի

մէջ՝ անպատճառ կրէին քաղաքական բնա-
ւորութիւն. նրանց կարող են զարգանալ ե-
կեղեցական, ուսումնական, քաղաքական
կան ասպարէզի վրա էլ: «Սակայն և այդ
կուսակցութիւնների մէջ, աւելացնում է
Բորչուլի, նշմարվում է բնաւորութեան կոդ-
մից, որոշ չափով, ազգացական կապ զուտ
քաղաքական, կամ հասարակական կուսակ-
ցութիւնների հետ: Եկեղեցական-աւանդա-
պահ կուսակցութիւնը ազգակից է պահ-
պանողական կուսակցութեան հետ, իսկ
եկեղեցական-վերանորոգիչ կուսակցութիւնը
ազգակից է ազատամիտ կուսակցութեան
հետ:»

Ամեն մի կուսակցութիւն յարգելի է, եթէ
նրա անդամները ճշմարիտ համոզված մար-
դիկ են և ընդհանրապէս դատաւարների
է՝ եթէ կուսակցիները կեղծում են իրանց
համոզմունքները, նուիրված չեն լոկ ազգա-
փարին, հետեւում են միմիայն իրանց նեղ,
չահափրական նպատակներին և իրանց
այդ նպատակներին հասնելու համար չեն

արհամարհում ամեն ներքին և աններքին
միջոցների դիմելը, նպատակին հասնելու
համար խտրութիւն չեն դնում միջոցնե-
րի մէջ: Եթէ կուսակցութիւնը (լինի դա
քաղաքական թէ՛ կրօնական) անկեղծ և
համոզված է, նա որոշ չափով կրթիչ
ներգործութիւն ունի ժողովրդի վրա. և
ընդհանրապէս, երբ այդ կուսակցութիւնը
իր նպատակներին հասնելու համար՝ կեղ-
ծում, խաբում, ստում, ամեն տեսակ եղութ-
ական միջոցների է դիմում.—նա անբա-
րոյականացնող, ապականիչ ներգործութիւն
ունի ժողովրդի վրա:

Կուսակցութեան բարոյականացնող կամ
անբարոյականացնող բնաւորութիւնը կախ-
ված է այնքան նրա դաւանական շրջանակնե-
րից, նրա այս կամ այն տեսակին պատկանե-
լուց, նրա այս կամ այն ուղղութեան պատ-
կանելուց.—այլ նրա բռնած ընթացքից, նրա
գործ դրած աւելի կամ պակաս ազնիւ մի-
ջոցներից՝ իր մերջնական նպատակին հաս-
նելու համար:

Եթէ բողոքական միսիոնարը, յայտնվելով
Ասիայի, կամ Աֆրիկայի խորքերում՝ Աւե-
տարանի աստուածային ճշմարտութիւնը
քարոզելու ժամանակ հաւատացեալներին
որսպէս համար՝ գործ է դնում խա-
բելութիւն, կաշառք, այլ և այլ անազ-
նի միջոցներ, նրա առաքելութիւնը չէ
կարող ազնուացնող, բարոյականացնող ներ-
գործութիւն ունենալ ազգէս և խաւար
ժողովրդի վրա: Բայց և իրան աւանդապահ
անուանող եկեղեցական կուսակցութիւնը,
որը կեղծաւոր կերպով յայտնում է թէ
նախապէս հաւատացեալներին հաւատա-
ւանութիւններին, նոյնպէս ոչինչ բարոյա-
կանացնող ներգործութիւն չէ կարող ունե-
նալ ժողովրդի վրա, եթէ իր նպատակնե-
րին հասնելու համար անընդհատաբար և
տարիներ ընթացքում գործ է դնում
ստուծիւն, խաբելութիւն, իր դիրքը պահ-
պանելու համար՝ անարգում է մնացած
կուսակցութիւններին, դրոշմելով նրանց ըն-
թացքը «եկեղեցութեամբ» անուանով իր
ձգտումները սուրբ աւանդութեան պաշտ-
պանի անունով քաղաքակրթւոյ կողմնադ-
նելով: Եկեղեցական միսիոնարը, հարստահարում է
հաւատացեալների գրգռանքը, վանտում
ուսումն է ջերմեւանների սրտաբուլիս դրա-
մական առատ նուէրները:

Այլոքեղ առաջնութեւն է մտքերի, գա-
ղափարների կատարեալ խառնաշփոթու-
թիւնը, կատարեալ խօսք: Ժողովրդի թըշ-
նամին համարվում է կոյր և խաւար տմ-

բոխի աչքում՝ իր անկեղծ և անձնուէր
բարեկամը, իսկ ժողովրդի ճշմարիտ բարե-
կամը՝ հանդիսանում է նոյն ամբողջ աչ-
քում՝ նրա ամենափոքրիմ, ամենապատգա-
ւոր թշնամին:

Մենք սկսեցինք մեր յօդուածը մի
շէյքարացի հեղինակաւոր իրաւագէտի
գրչի վկայութեամբ, վերջացնենք մեր այս
յօդուածը մի այլ հեղինակաւոր գրողի, մի
հայ գրողի խօսքերով:

Երբ Ալեքսանդր Գրիգորիս եպիսկոպոսը
դեռ աշխարհական ժամանակ Կ. Պոլսում
«Բէկասեան Թռչնիկ» լրագիր էր հրատա-
րակում, նրա ամենաջերմ պաշտոններից և
աշխատակիցներից մէկն էր մի ոմն Արմե-
նակ Հայկունի: Եւ ահա այդ Հայկունին մի
փոքրիկ բրօշուրի մէջ, որը հրատարակված
է Կ. Պոլսում դեռ ևս 1863 թվին, և որը
ներշնչված է «Թռչնիկի» պայծառ գաղա-
փարներով, ուղարկութեան արժանի հետե-
ւեալ առաջաբանով դիմում է ընթերցող-
ներին:

Նա, որը քիչ կամ շատ տեղեկութիւն
ունի այս աշխարհիս հին և նոր պատմու-
թեան մասին, հարկաւ կրնայ յիշել կամ
գիտնալ թէ՛ որ և իցէ նոր սկզբունք մը
իր յայտնվելուն հետ միշտ ու առաջ աւա-
րտված է: Ամեն նոր սկզբունք երբ ժողո-
վրդեան մը մէջ առաջին անգամ, կամ լա-
ւազդէն, բացայայտ կերպով կը յայտնվի, շատ
ընդդիմութիւններու և թշնամիներու կը
հանդիպի: Հասարակ ժողովուրդը չէ սա-
կայն որը նոր սկզբունքի մը դէմ կը զինվի,
այլ ասոնց մէջէն նախադրձակները անոնք
վը լրսրսն որոնք գրգռվել են ազդեցութեան
ունին հանրութեան վրա, որոնք երբ կը
տեսնեն թէ իրենց այս ազդեցութիւնը վը-
տանգի մէջ է և ըրած ու ընելիք կո-
ղուպուտներն ինչն ձեռքերնուն ելլելու վրա,
անանկ սոսկալի աղաղակներով կը սկսին
յարձակիլ նոր սկզբունքին և կամ նրա
յայտնողին վրա, որ ժողովուրդը կը շուա-
րի և կը սկսի իր բուրդը գզողնե-
րի՞ն հետ մէկտեղ պատերազմել այն
ձեռքին դէմ, որը նոյն ժողովրդի փրկու-
թեան համար ուխտած և որոշած է աշ-
խարհը:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

Այստեղ, մարտի 30-ին, կարճատե հիւանդութիւ-
նից յետոյ վախճանից յայտնի լեզուագէտ Սար-
գիս Սարգսեան՝ 38 տարեկան հասակում թաղ-
ման հանդէսը կատարվեց ապրիլի 1-ին: Հանգու-
ցեալին վերջին յարգանքը տուր և համար եկեղե-
ցում հաւաքվել էր մեծ բազմութիւն: Բոլորի դէմ-
քերը արտայայտում էին ցաւակցութիւն վաղահաս
մահուան դէմ: Դադարը դարձրւեալ էր 7
պատիւներով՝ «Մուրճ» ամսագրի խմբագրից և
խմբագրական ժողովից, Թիֆլիսի մի խումբ երի-
տասարդներից, Մոսկուայի հայ ուսանողներից, հա-
նգուցեալի հայրենակից վաճառականներից, Լա-
զարեան ճեմարանի վերատեսուչ պ. Գ. Բանա-
նեանց, պ. Գ. Խալաթեանից և երեք բարեկամ
ուսանողներից: Եկեղեցում պ. Գ. Խալաթեան և
մի ուսանող դամբանական կարդացին: Պ. Խալա-
թեան աշխատեց կարճատե կերպով որոշել հա-
նգուցեալի մատուցած ծառայութիւնը աշխարհիկ
հայրենի ուսումնասիրութեան գործին: Լուրջ և

զգացված դամբանականը տպաւորութիւն գործեց
ուժնիւղիւրների վրա: Այդ դամբանականում յայտն-
ված մտքերը պ. Խալաթեան մտադիր է աւելի
հիմնաւորված ու ընդարձակած ձևով տպել՝ երևի
«Մուրճ» ամսագրում: Դամբանականներից յետոյ
դադարը դուրս բերեցին եկեղեցուց: Հանգուցեալի
բարեկամներն ու ծանօթները բաւական մեծ թւով
յուզարկաւորեցին դիակաւորը մինչև հայոց գերեզ-
մանատունը: Գիւղիկ հողին յանձնելիս ցուրտ քա-
մին իր ողբաձայն սուղուով ձայնակցում էր եկե-
ղեցական տիտուր երգեցողութեանը.—կարծէք
բնութիւնն էլ կարեկցում էր ծաղիկ հասակում
վախճանված հոտակրիկ մարդուն...

Հանգուցեալ Ս. Սարգսեան ծնվել էր Աղու-
միւրճակայ Յիւսէ գիւղում: Ուսումը աւարտել էր
Մոսկուայի համալսարանի պատմական.—լեզուագի-
տական բաժնում կանդիդատի աստիճանով: Դաս-
նակներից աւելով Սարգսեան համալսարանում
աշխատելիս է եղել հաղորդակտ բարեխղճութեամբ
ու սիրով, որին մասամբ ապացուց կարող է լինել
նրա այդ ժամանակ ստացած արժանի մեդալը մի
լեզուագիտական շարադրութեան համար: Աւար-
տելով համալսարանը Սարգսեան 1878 թվին հրա-
ւիրվում է հին լեզուների ուսուցիչ Էջմիածնի ճե-
մարանը, բայց այնտեղ նրան յանձնում են աշ-

խարհագրութեան դասեր, որովհետեւ նրա տեղ
հասնելուց յետոյ փոխում են հին լեզուների դա-
սաւորութիւնը ճեմարանում մտցնելու վճիռը: Մի
տարուց յետոյ Սարգսեան հեռանում է Էջմիածնից
տանելով իր հետ ամենաշնորհ տպաւորութիւն:
Դրանով պէտք է երևի բացատրել այն, որ ան-
ցեալ աշնան ճեմարան տեսուչ հրաւիրվելով, նա
մերժեց: Ճեմարանից հեռանալուց յետոյ հանգու-
ցեալը աշխատում է ուսուցչական տեղ գտնել իր
հայրենիքում, կովկասեան չրջանի գիմնալիսնե-
րից մէկում, բայց այդ նրան չէ աջողվում և ան-
հրաժեշտութեամբ նրան դրում է հեռու հիւսիս,
Բրեսնայ գաւառական քաղաքը, ուր մի քանի
տարի ամենաքա թափաղակութեամբ վարում է իր
պաշտօնը (պրոֆէսորալային) հին լեզուների ուսուց-
չի), արժանանալով ոչ միայն բոլոր աշակերտների
և ամբողջ ուսուցչական խմբի ջերմ սէրին, այլ և
հասարակ ժողովրդի յարգանքին ու համակրու-
թեանը (իրեն երգեւեալ դատաւոր): Բրեսնայում
է գրում նա իր վերին աստիճանի լուրջ հետադ-
ուսութիւնը Աղուցեցոց բարբառի մասին, որը հա-
ղագեալի ծրագրով պէտք է լինէր առաջինը մի
չափը նոյնաման շարադրութիւնների մէջ, որոնց
զօրախոսաբար վիճակված էր մնալ չխրադրված
դիտաւորութիւնների թւում: Սակայն այդ խու-

անկիւնումն էլ բախտը հանդիպում է թողնում
Սարգսեանին: 1890 թվին Բրեսնայի պրոֆէսորա-
լիան փակվում է և հանգուցեալը մնում է ան-
գործ, անպաշտօն, «քառասուն տարեկան դրօ»,
ինչպէս ասում էր ինքը այդ ժամանակ սրտի
դաւանացած բուլեւերին: Անցեալ տարի հանգու-
ցեալը անցկացրեց կովկասում և թէև նրան հա-
ջողվեց այնտեղ բանալ մասնաւոր պրոֆէսորալիս,
ինչպէս ուղում էր, բայց էլի այդ տարին նա չի-
շում էր իրեն իր կեանքի ամենաբացայր շրջաննե-
րից մէկը: Թիֆլիսի անցեալ տարվայ եռացող
կեանքը նոր երիտասարդութիւն էր ներշնչել թէև
սրտով չը ծերացած, բայց երկար ժամանակ լայն
հասարակական ասպարեղից հեռու տարած մա-
նագէտին: Անցեալ տարվայ աշնանը հանգուցեալը
հրաւեր ստացաւ հայերէնի ուսուցչի պաշտօն
ստանձնելու Լազարեան ճեմարանի պատրաստու-
կան դասարաններում: Նա սիրով ընդունեց այդ
հրաւերը և հեռացաւ հայրենիքից, ուր տեղ չէր
գտնվում նրա համար: Այժմ նա թէև դարձեալ
իր իսկական տեղը չէր գտել, բայց այնտեղ տա-
նող սանդուղքի առաջին աստիճանների վրա էր
գտնվում: Պաշտօնը ժամանակաւոր էր և նա ա-
պագայում կարող էր յուսալ իր ոյժերին ու ար-
ժանաւորութիւններին համապատասխանող դոր-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԱՐՁԱՒԱՆՔԻ» ՎԱՐՄՈՒՆԻՆԵՐԻՑ

«Արձագանքը» ձեռքը ձեռքի տուած անանուն թերթի հետ աշխատում է համոզել «ամբողջ աշխարհին», որ «Մշակը» ազգութայն է, եկեղեցիքանդող է... ուրեմն և ոչ մի բարոյական իրաւունք ունի մասնակցելու հայոց կաթողիկոսին ընտրութեան գործին, ուր մնաց թեմական պատգամաւոր ընտրվելը... Այս բոլորը ապացուցանելու համար, «Արձագանքը» ըստ իր սովորութեան «Մշակի» 79 և 82 թ. №№-ից իրան յատուկ հարպիկութեամբ դուրս է կորցում կարող է հարուած հասցնել «Մշակի» խմբագրի թեմականութեանը...

Մեր «աւանդապահներն» այդ տեսակ վարմունքը հայ ընթերցող հասարակութիւնը արդէն սկսել է դժանդատել, հասկանալով, որ կարելի է նոյն իսկ աւետարանից անխիղճ կերպով այս ու այն կտորներ արտատանել, իրար կողքին չարել և, այդպիսով աղաւաղելով բուն իմաստը, շատ ցատկաւ եղբակացութիւններ հանել: «Մշակը» կարճ կերպով արդէն պատասխանեց «Արձագանքի» այդ յորուածին:

Այստեղ ուղում ենք կանգ առնել մի հանգամանքի վրա, որ առաւել ևս պարզ է լուսաբանում մեր հակառակորդների գործ դրած միջոցները:

Ենթադրենք մի րօպէ, որ պ. Աբգար Յովհաննիսեան, յիշելով «Մշակի» անցյալը, միանգամայն իրաւունք ունի իր երեւոյ դարձնելու «Մշակի» խմբագրի, բայց ինչպիսի բացատրւոյնք, որ մի և նոյն պ. Աբգ. Յովհաննիսեան 1884 թ.ին, կաթողիկոսական ընտրութեան ժամանակ, ոչ միայն հնարաւոր էր դառնում միանալ «Մշակի» կուսակցութեան հետ, այլ և «Մշակի» հետ միասին կատարել կրօն էր մղում հակառակ կուսակցութեան դէմ, որի ներկայացուցիչներին այժմ ձեռք է մեկնել...

Զէ որ 1879 և 1882 թ.աւանդները 1884-ից առաջ էին և եթէ 79 և 82 թ. «Մշակի» բռնած ընթացքը հայոց եկեղեցու վերաբերմամբ դատապարտելի էր, «աւանդապահ» պ. Աբգ. Յովհաննիսեան 84-ին, երբ «Մշակի» յորուածները աւելի թարմ տպագրութեամբ ունէին դրօշաւ պ. Յովհաննիսեանի վրա (քան թէ այժմ՝ տաս տարի անցանքից յետոյ), չէր պէտք է միանալ Արժուտու հետ և իր տուրի Արժուտու տուրի հետ միասին դնել Եւանգելիստի և Ապոկալիպսի դէմ, որոնք փառաւոր կերպով սեպան...

Այն ժամանակ ընտրվեց պատգամաւոր պ. Աբգ. Յովհաննիսեան, իսկ կանխիկատ Արժուտին, որը ընտրութեան ժամանակ, քուէարկութիւնից առաջ, բացարձակ կերպով յայտնեց որ ինքը չէ կարող պատգամաւորութիւն ընդունել իր ընտանեկան գործերի պատճառով և իր կողմից առաջարկեց իբրև պատգամաւոր Աբգ. Յովհաննիսեանին...

Պարզ է. պ. Աբգար Յովհաննիսեան, «Արձագանքի» խմբագիրը, կամ այն ժամանակ էր կեղծում, կամ այժմ... Մեզ թվում է, որ նա կեղծում էր թէ այն ժամանակ և թէ այժմ...

ՎԻՆԱՄԹԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆՐԱՒԻՍԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակ» լրագրի 38-րդ և 42-րդ համարներում արծարծվեց հայերիս Վինամթի միջոցառւոյն երաժշտական ցուցահանդէսին մասնակցելու խնդիրը: Որովհետեւ այս մասնակցութիւնը, ինչպէս երևում է, տեղի պիտի ունենայ և ամբողջ լուսաւորեալ աշխարհի առաջ հանդէս պիտի հանէ մեր ազգի երաժշտական ընդունակութիւնը և յատկութիւնը՝ ուստի հարկաւ ցանկալի է, որ նա արդար կարելի է լաւ և պատասխել լինի, որի համար հարկաւոր է ոչ միայն մեր հոգեւոր և ժողովրդական երաժշտական գրականութիւնը ներկայացնել, այլ և կարելի եղածին չափ լաւ և մշակված ձևով ներկայացնել: Մի կողմ թողնելով մասնակցութեան ծրագրի խնդիրը, որը գործին հմուտ մարդիկ հարկաւ կը մշակեն, եւ հարկ եմ համարում հետաքրքրվողները ուշադրութիւնը դարձնել նաև մի մասնագէտ-երաժշտի վրա, որի մասնակցութիւնը, իմ կարծիքով, ոչ միայն օգտակար, այլ և անհրաժեշտ է գործի կատարելաւ աշխուրհական համար: Այս անձն է պ. Մանուկ Նիմայեան, որն ունի բոլոր ցանկալի և կարևոր պայմանները՝ լաւագոյն կերպով հանդէս հանելու մեր երաժշտութիւնը:

Պ. Նիմայեան կատարեալ հմուտութիւն ունի մեր եկեղեցական երաժշտութեան, և մեծ մասնակցութիւն է ունեցել ձայնագրելու այն հաստատարող շարաններ, որ տպագրվեց ա. էյմիսմուս 1874 թ.ին, ինչպէս վկայում է ունի հրատարակութեան առաջարկում: Նա եղել է Նիկողայոս Թաշճեանի աւանաստաւարդէմ աշակերտը Կովկասում:

Պ. Նիմայեան լաւ ծանօթ է մեր ժողովրդական երգերին, որոնք նա քանի տարուց ի վեր հաւաքում է՝ մի լրակատար հաւաքածու լոյս ընծայելու նպատակով:

Պ. Նիմայեան հմուտ է նաև արեւելեան, մասնաւոր պարսկական երաժշտութեան, թէ գործնականապէս և թէ տեսականապէս: Նա նուազում է և մի ամրական գործիքի վրա (ժառ):

Պ. Նիմայեան Ս. Պետրեբուրգի երաժշտական ձեւաւորում (Կոնսերվատորիա) եւրօպական երաժշտութեան տեսութեան (Թէօրիայի) լրակատար ուսում է ստացել, և աւարտել է ակտիւստի աստիճանը: Երաժշտական դպրոցին առաջին կարգի վկայականով:

Պ. Նիմայեան եռաձայն ձայնարկել է և պատրաստ ունի մեր ամբողջ պատարագը: Նրա այդ աշխատանքը հարեանցի կերպով յիշում է պ. Կարա-Մուրզան («Մշակ», № 42), որը մէջ բերելով ուրիշ այսպիսի փորձեր և ամեն միջը պահարարելով (և կարծեմ իրաւացի պատարակելով), պ. Նիմայեանի այս աշխատութեան մասին ասում է, թէ «պ. Նիմայեանինը դու յայտնի չէ»: Երևի պ. Կարա-Մուրզայ առիթ չէ ունեցել լսելու պ. Նիմայեանի այս շարադրութիւնը, ուստի կարծիք չէ յայտնել նրա մասին: Իսկ ներքոյ ստորագրեալ Պետրեբուրգում մի քանի անգամ լսել եմ այդ շարադրութիւնը, երգված միայն 10—12 անձինքներից բաղկացած խմբով: Թէպէտ ևս մասնագէտ-երաժիշտ չեմ, ուստի չեմ կարող հեղինակաւոր վկայութիւն տալ լսածին մասին:

Բայց այսքանը կարող եմ խոստովանել, թէ լսած լինելով բազմաթիւ առաջնակարգ երաժիշտների երգեցողութիւնն ու նուազները, լսած լինելով հազարաւոր երաժշտական ընտիր շարադրութիւններ՝ եւ այնու ամենայնիւ դժայելով լսեցի պ. Նիմայեանի կազմած պատարագի արարողութիւնը, որտեղ բուն եղանակներ անվար պահպանված լինելով ներդաշնակված են եւրօպական կանոնաւոր ներդաշնակութեամբ, հաճախ և զանազակ ուղուէն, մի պայման, որին չեն յաջողել համեմել եւրօպացի երաժշտականները: «Սուրբ-սուրբ», «Տէր-որդմեան», «Հայր-մեր» մինչև այժմ էլ դու հնչում են ականջիս:

Պ. Նիմայեան քառաձայն պատարագում ունի մօտ 12 հատ բուն ամրական ոգով հայ ժողովրդական երգեր (Առաւօտեան քաղցր և անոյշ հովերը, Ի նընջմանդ արքայական, Զան գիւլիւմ, Լուրիկ, պարեմքներ և այլն): Բայց սրանք անձամբ լսած չը լինելով՝ չեմ կարող վկայութիւն տալ:

Այսպիսի հմուտութիւն և պատրաստութիւն ունեցող երաժիշտ անուրը լրագրութեան միջոցով արծարծելով ցանկանում եմ, որ նրա վրա առանձին ուշադրութիւն դարձնեն Վինամթի աշխարհահանդէսին մասնակցութեան գործով զբաղողները, մասնաւոր դերապայծառ Հ. Ա. Այստեղ նենս, որը նախաձեռնող է այս ուղարկայի ձեռնարկութեան:

Հարկ չը կայ ասելու, որ ներկայ նկատողութեամբ եւս որ և է կերպով չեմ ուղում սքողել մեր միւս երաժիշտներին անունները կամ գործերը: Ես միայն պարտք համարեցի հետաքրքրվողներին ծանօթացնել մի լուրջ երաժիշտ մասնագէտի հետ, որ Պետրեբուրգից նոր վերադարձած լինելով իր արժանաւորութեան չափով դու ծանօթ չէ հայ հասարակութեան:

Պ. Նիմայեան ներկայումս բնակվում է Քիթիւտում և եկեղեցական ձայնադրութեան ուսուցիչ է Նիկոսիսեան հոգեւոր դպրանոցում:

Ստ. Մարկոսեանց

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐՈՒՄԻՑ

Ապրիլի 12-ին

Մայրաքաղաքիս այսօրվայ նորութիւնները՝ ամենիս հետաքրքիր և սուսանաւոր հոսանքութեան նիւթ՝ ներկայանում է մեզ հայ երգչի պ. Դանիէլեանց, ոչ միայն հայ հասարակութեան համար, այլ և առհասարակ մայրաքաղաքի բնակիչների համար, սկսած ամենաքաղաք չըմաններից մինչև ստոր դասակարգը: Եւ այս հետաքրքրութեան գլխաւոր պատճառն այն է, որ մայրաքաղաքը՝ սկսած Վայսերական թատրոնից մինչև մասնաւոր օպերային բեմերը, չունեն մի օրինաւոր տեսիլ. ուրեմն ինչ կասկած, որ Դանիէլեանց իր փառաւոր ձայնով այսօրվայ հերոս է ներկայանում:

Պետրեբուրգի հասարակութիւնը և մայրաքաղաքիս զանազան օրգանները ուղարկութեան ողջոյն են տալիս նրան: Երեք տարի սրանից առաջ արդէն տեղիս թէ հասարակութիւնը և թէ լրագրութիւնը մեծ յոյս էին տածում նրա ապագայ փայլուն աստղ լինելու վրա օպերային բեմի համար և այս յոյսն արդէն Դանիէլեանց արդարացրեց, այս օրերս թիւնը կարծեք նրա կենքի նշանաբանն էր: Գուցէ այդ ծայրայեղ համեստութիւնն էր մասամբ պատճառը, որ նա չունեցաւ գործնականութեան այնպիսի ընդարձակ ապագայք, որ համապատասխանէր նրա փայլուն ընդունակութիւններին ու մեղմում հաղուաղիւտ հմուտութեանը: Մենք վերջին ժամանակներս մասնակցելով նրա աշխատութեանը բաւարարի նիւթեր մշակելու համար, անձամբ առիթ ունեցանք ծանօթանալու նրա դարմանալի ընդունակութեան ընդունակութիւններին հետ: Իմ ու պ. Վ. Թ.—ի հաւաքած գաւառական (Արարատեան բարբառի) բառերի մասին աղուէնց (Արարատեան այնպիսի սուր ու տեղին դիտողութիւններ էր անում, որ բոլորս մնում էինք հիացած: Նրա բոլոր a priori ենթադրութիւնները այդ բառերի մասին մենք իբրև բարբառին ծանօթ հաստատում էինք: Եւ որքան սիրում էր հանդուցեալ իր մասնագիտութիւնը: Պէտք էր տեսնել ինչպէս ուրախանում, յափշտակվում էր նա, երբ որ Արարատեան բարբառում նոր ապացոյցներ էր գտնում իր՝ հայերէնի մասին կարեւոր հիպոթէզների համար: Նրա սէրը դէպի իր մասնագիտութիւնը համարում էր մինչև կրքի աստիճանի,—կրքի, որ այնքան դուր չէր լիւսն հայերին և առանց

երգելով մի քանի բօմաններ և արիաներ Երվանդի ուսումնարանի դասիձեռն, յօղաւ տովաններ իրենց կոնցերտում, որտեղ ներկայ էին Մեծ Խշմանները և մայրաքաղաքիս ականաւոր անձինք. այդտեղ մեր հերոսը ստացաւ անվերջ ծափահարութիւններ: Սրանից երեք տարի առաջ թատրոնական դերեկցիան իր հաշւով ուղարկեց Դանիէլեանցին իտալիա իր ձայնը կատարելագործելու. նա մի քանի տարի տոկոսութեամբ աշխատելով կարողացաւ իր թէ և հարուստ, բայց հում ձայնը մշակել և կատարելագործութեան հասցնել: Նա դրամատիկական տեսիլ է, նրա ձայնի ծաւալը սկսած առաջին գծի տակի վրա—ից հասնում է մինչև բարձր «դո»:

ձայնի ծաւալը երկու ութնեակից աւելի է: Նրա ձայնը համահասարակ հնչում է իր ամբողջ ընդունակութեան և կօյրիւտ է ստացել, նա իշխում է իր ձայնի վրա և ձայնը հնարանդում է իրան և աւելի ձկուն ու դուրեկան է դարձել, նա ճիշդ պահում է երաժշտութեան կանոնները, թէ զգաւորական կողմից և թէ արտասանութեան տեսակէտից: Դանիէլեանի ձայնը կարելի է համեմատել յայտնի խոսակցի Պարիսիէի ձայնի հետ: Նա լաւ ըմբռնել է խոսական չօրան և բեմերում և մէջ արդէն ունի 8—10 օպերաներ, «Ջիակոնդա», «Ալիբա», «Հուզեմօմեմ», «Աթիլիոն», «Պարիսիէ», «Տրուբադուր», «Օտտելլո», և այլն: Անցեալ անգամ Վայսերական թատրոնում մի փորձական կրկնութիւն էր նշանակված «Ջիակոնդա» օպերայից. նա երգեց ինչօր արիան առաջին գործողութիւնից: Դանիէլեանց այս կտորը շատ հմուտութեամբ երգեց և իր ուսեղ կրօնից մայրնով համարեա ծածկեց ամբողջ օրկեստրը: Գրեթէ ցիան առանց դէբիւտ նշանակելու, ուղղակի սեպ տեսիլներից նշանակեց մասնակցելու օպերայում և առաջին օպերան նրա մասնակցութեամբ, կը լինի «Ջիակոնդա» օպերան, հեղ. Պանկիէլի: Դանիէլեան կերպ է ինչօր մասը: Գանկանում երբ առ ի սրտէ աշխուրհիկ իբրև առաջին հայ երգչին, որը Վայսերական բեմին է բարձրանում: Դանիէլեան մայրիս սկզբներին կայցելէ մի քանի հայաբնակ քաղաքներ կոնցերտներ տալու թիֆլիս, Բաղու, Նոր-Նախիջևան և այլն:

Յոյս ունենք որ հայ հասարակութիւնը անտարբեր չի մնայ և կը քաջալերէ իր հարազատ դասակին նրա այս փառաւոր գործունէ:

ՆԱՄԱԿ ԱՐԱՍՏՈՒՄԱՆԻՑ

Ապրիլի 14-ին

Զը կայ ցուրտ, ձիւն և սառնամանիք, չը կայ հողմ և մրիկ. պերճաւիպ և վառվռուն գեղեցիկ արփին ցրաքրեց իր ճաճանցները թանձրաքղ երկնքի կամարից, ներշնչելով նոր կենսւ համայն ընտելեան: Զարթեց կայտառ մանուկ փայտերս դարունը, գլորեց ալիւալը ծերունի ձմեռը և լուծվեց արփին ողբի ձուլարանում: Խայտառ է ընտելեան իր նորոտի հասակում, թող խայտառ և կայտեն, ոտոտոտեն, ճուղղեն, երգեն և պարեն մարդ և անասուն, դուռն և թուշուն, անտառ և պարտեզ, դաշտ և արօտներ. թող ցնծայ երկին, ցնծայ և երկիր, և այդ ցնծութիւնը չէ սահմանափակվում միայն դուարթիւրես դարման

ծի: Բազմամեայ թափառումներից յետոյ նա վերջապէս ընկել էր փոքր ի շատէ հարթ ճանապարհի վրա և նոր եռանդով սկսել էր պարապել իր սիրած մասնագիտութեանը: Նա արդէն սկսել էր գրել «Աշխարհիկ ընդունակութեան պատմութիւնը» (ծրագիրը գրված պատրաստ է), մտադիր էր կարգի բերել աշխարհաբարի քերականութեան համար պատրաստած նիւթերը, նիւթեր էր հաւաքում ու մշակում գաւառաբարբառների բառարանի համար: Բառարանի նիւթերը նա մշակում էր ուսանողներից կազմված մի խմբի հետ, որի համար նա հանդիսանում էր հմուտ առաջնորդ մասնագիտական պարագլուխներում և անկեղծ, պարզ ընկեր յարաբերութիւնների մէջ, այսինքն հանդէսանում էր այնպիսի մի մարդ, ինչպէս պէտք է լինի իւրաքանչիւր լուսաւորված ու եւրօպական ողբն իւրացրած մասնագէտ: Սակայն մասնագիտական պարագլուխները չէին խանգարում հանգուցեալին հետաքրքրվել հասարակական հարցերով, որ նա իր սուք բնաւորութեան համաձայն շատ մօտ էր առնում իր սրտին: Եթէ մարտ ամսի այստեղի պատգամաւորական ընտրութիւնների ժամանակ շատ քիչը կարող էին համեմատվել նրա հետ գիտակցական ու բարեխիղճ վերաբերու-

թեանը դէպի գործը, ոչ ոք չը կար որ նրա չափ համակրելի լինէր իր հայեացքի կողմից կաթոլիկոսական խնդրի վրա: Հանգուցեալը համեմալի էր այդ հարցում առաջադրված ամբողջ ազատամիտ կուսակցութեան ու իր անունին արժանի երիտաւարութեան հետ: Նա պարզ յայտնեց որ անպայման խրիմեանական է ու կուսակցի Սեդա-կեան, Ալեքսանդր Կալիկոպոսեանի և չը նայելով որ նոր մարդ էր մօակվաքնակ հայերի համար, չը նայելով որ Մօսկվայի հայերի մէջ անձնական ծանօթութիւնը շատ մեծ դեր է խաղում, ընտրվեց պատգամաւորի փոխանորդ: Հանգուցեալի հայեացքները լուսաւոր ու առաջադիմական էին ոչ միայն այդ և ուրիշ մասնաւոր հարցերում, այլ և ընդհանրապէս: Նա օրգանական կերպով տանել էր կարողանում կենսական խաւարաններին և առանց վրդովմունքի չէր կարողանում խօսել փաւրեղեցի: Դրապարակախօսների մասին: Վազանցներ ատուր, համարձակ վերաբաց միտք և բաց պարզ, վերին աստիճանի անկեղծ սիրտ՝ հանգուցեալի յատկանիշներն էին: Ոչ մի կեղծ ձայնանիշ չէր հնչում նրա խօսքերի մէջ, ինչ որ նա առում էր բոլորում էր նրա սրտի խորքից: Ցուցամոլութեան ոչ մի նշան: Ընդհակառակը՝ համեստութեան ոչ մի նշան: Ընդհակառակը՝ համեստութեան

որի, յայտնի պրօֆէսոր Տիմիտեալովի ասելով, լոյս չէր կարող տեսնել ոչ մի նշանաւոր գիտական գործ: Հանգուցեալը առհասարակ կրթութ մարդ էր,—կրթութ բառի լաւ նշանակութեամբ: Նա ոգեւորվում էր վեմով և վրդովվում էր ստորութիւնից: Նա բարի էր այդ բառի ոչ թէ հայկական նշանակութեամբ, որով բարութիւնը հոմանիշ է անտարբերութեան, այլ բարիի եւրօպական նշանակութեամբ: Նախանձ, եսականութիւն տեղ չունէր նրա սրտում: Այն տեսակ անհասարակութիւններից, ինչպէս հանգուցեալն էր, կարծեք մի տեսակ լոյս ու ջերմութիւն է տալով չըմալապատուներին վրա: Եթէ չը լինէր այդ տեսակ սուք սրտեր, կենսքը այնքան սառը և խաւար կը լինէր, որ կը կորցնէր իր գինը: Եւ մարդուս սիրտը կորստվում է ցաւից ու կակիծից, երբ աշխարհիս երեսից պակասում է այդպիսի մի անձնաւորութիւն, որը ջերմացնում է կենսքը, որն իր օրինակով հաւատ է ներշնչում դէպի մարդուս լաւ բնադրումները...

Տ. Յովհաննիսեան

«Արձագանքը» ձեռքը ձեռքի տուած անանուն թերթի հետ աշխատում է համոզել «ամբողջ աշխարհին», որ «Մշակը» ազգութայն է, եկեղեցիքանդող է... ուրեմն և ոչ մի բարոյական իրաւունք ունի մասնակցելու հայոց կաթողիկոսին ընտրութեան գործին, ուր մնաց թեմական պատգամաւոր ընտրվելը... Այս բոլորը ապացուցանելու համար, «Արձագանքը» ըստ իր սովորութեան «Մշակի» 79 և 82 թ. №№-ից իրան յատուկ հարպիկութեամբ դուրս է կորցում կարող է հարուած հասցնել «Մշակի» խմբագրի թեմականութեանը...

գալստեամբ: Տօնում է այսօր Արամիւսեանը ծաղկեայ փունջերով, կանաչ դափնիներով իր երջանկութեան ամենամեծ օրը, որպիսին իր գոյութեան օրից երբեք չէր կարող երազել անգամ: Այսօր Արամիւսեանը երեկոյեան վեցերորդ ժամին արժանացաւ իր Մայր-Քաղաքի բարեհաճ այցելութեան և անմահացաւ հիւրասիրելով իր խաղաղ անկիւնում Օդեստապետ և Մեծ Կայսրուհուն և Նոյա Կայսրական Բարձրութիւններին՝ Մեծ Իշխանուհի Կսենիա Ալեքսանդրովնային և Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչին: Այսօր և մինչ, Արամիւսեանի ասպնջականներս, զիջեցիկ արփիկ նաւակատեայ տօնի հետ տօնում ենք, ծափահարեալով, երգում և պարում այս մեծ օրը և երջանկութիւնը:

Ուրախ ապագորութեան ներքեւ միշտ տրամադրուած է մարդ հարգելու և ուրախ նորութիւններ: Այդպիսի մի նորութիւն պէտք է համարել Բարեգործական ընկերութեան Ալլալեյկայի բաժնի մի նոր նախագահութիւնը՝ Ալալեյկայում իր հովանաւորութեան ներքեւ հաստատել ընկերացողներին հիւանդանոց տեղական հայ և ալալեյկայում աղքատ հասարակութեան համար ընդհանրապէս: Նա արդէն բանակցելով տեղիս զանազան ազգերի և կրօնի հոգեւոր և վարչական ներկայացուցիչներին և կառուածաւորներին հետ, նախաձեռնութեան նպատակով համաձայնութիւն ստացել է դրականապէս, ուստի հաւանական է շուտով դործին ձեռնարկելու: Պատիւ տեղական բաժնի վարչութեան:

Երկրորդ նորութիւնը պէտք է համարել ոստիկանական վարչութեան այն զեղեցիկ կարգադրութիւնը, որ մասնաձեռնների առեւտրը արգելել է հրապարակների վրա, դռներից անցնելու քաղաքում միջոցները արգելել պատասխարկում են խառնութիւնի մէջ, այնպէս որ այսուհետեւ տեղից փախած և թողնել կողմում միայն վայելելու բազմազան զրկված պիտի լինեն: Երանի թէ մի այդպիսի կարգադրութիւն էլ լինելու բախտն էր և միջապահանքների համար, որոնք բացի այն, որ փողոցը համարեա ընտել է իրանց՝ դուրսը արագած զանազան ուսուցիչներով, նոյնպէս ներկայում և արեւելք փախած այդ միջոցները միշտ ստիպված ենք գնել և կերակրել: Որքան անհաշուար և բաւարար կը լինեն այդ միջոցները առողջական պայմաններին, այդ մասին մինչ ցարդ դեռ ես ոչ ոք չեմ հոգանել: Ուրիշ նորութիւններ թէպէտ և կան, սակայն ոչ այնքան հետաքրքրիկ: Օրինակ, կաթնօրիկ երիտասարդութիւնը ամսին 12-ին տուեց նախկին կրօնական դահլիճում հայ երիտասարդների ընթերցարանը, «Երեւան» ողբերգութիւնը, որի արդիւնքը հասարակական ընթերցարանի օգտին էր: Սակայն թէ մուտքը և թէ ներկայացումը բաւարար չէին: Ճշմարիտը խոստովանած ընթերցարանի վարչութիւնը, որը զեկավարվում է Բարեգործական ընկերութեան տեղական բաժնի վարչութիւնից, չը կարողացաւ ընթերցարանը հանրամատչելի դարձնել: Չը նայելով տեղացի երիտասարդ անդամների բողոքին, այնուամենայնիւ ընթերցարանի վարչութիւնը իր նոր կանոնադրութեամբ կրկին մերժեց երաշխաւորութեամբ և առանց գրաւականի գրքեր դուրս տալու և գրքերի կրկնազննելու դրուական պահանջներով շատ շատերին արգելեց էլ լինում իսկապէս օգտվել ընթերցարանից, որի համար այնքան ճիշդ է թափել և զոհաբերութիւններ արել (և միշտ պատրաստ է զոհաբերութեան) ընթերցարանի գոյութեան համար, կարծես խեղճ ուսուցիչը և աղքատ արհեստավորը իրաւունք չունեն գրքեր կարդալ, այլ միայն նրանք որոնք հարուստ են և կարող են գրաւականներ տալ և գիրք վերցնել:

ՆԱՄՄԱԿ ԱՌԱՎԱՐԱՅԻՑ

Մեր հասարակութիւնը, չը նայած իր վերին աստիճանի չքաւորութեանը և իր զարգացման ստոր աստիճանին, դարձեալ կարողացել է ըմբռնել ուսումնարանների նշանակութիւնը և իր ոյժերից բարձր աշակցութիւն և մասնակցութիւն է ցոյց տուել ուսումնարանների առաջադիմութեան: Այդ աշակցութեանն ենք միայն պարտական, որ այսօր մեր փոքրիկ քաղաքն ունի երկրասեան երկուսու ուսումնարաններ մօտ 300 աշակերտ և աշակերտուհիներով, որոնց տարեկան մուտքի և ծախսի ընդհանր հասնում է 5—6 հազար ռուբլու:

Բայց ափսոս, որ այս բոլոր սիրովից պայմաններում մեր ուսումնարանները, մասնաւոր ներկայ ուսումնական տարում, կատարեալ անհոգութեան են մատնւած այն մարդկանց ձեռքով, որոնք այսպէս թէ այնպէս ուսումնարանների կառավարութեան գործի գլուխ են կանգնած: Դեռ ուսումնական տարին չը սկսված՝ հոգաբարձութեան երկու անդամները չը կամուսնով տանել թեմական տնայի կառավարչախումբները, հետագայն պաշտօնները: Նախկին տարւայ ուսուցչական խմբին յաջորդեց թեմական տեսչի ձեռքով հապճեպով կազմակերպված նոր խումբը, որը Ալալեյկայից դուրս հէցա առաջին օրերից տարածայնութիւնների մէջ ընկաւ և հետզհետեւ անբաւականութիւններ առաջացնելով միմեանց մէջ, երկու կողմի բաժանվեց: Ամբողջ ուսումնական տարին ուսումնարանները տուժել են հետեւեալ պատճառներով: ուսուցիչները և ուսուցչուհիները մեծ մասամբ իր ժամանակին չէին զախլ դասերին, ծեծը դործադրվում էր ուսումնարաններում, փողոցային հայտնաբերում անելու աշակերտներին, այն էլ հրապարակով ուսուցիչը չէր վարանում, աշակերտուհիներին և աշակերտներին ամբողջ դասի ժամին դուրս, սառնամանիքում կանգնեցնելը սովորական է եղել ուսուցիչներին և վարժուհիներին համար, առանց չարգելի պատճառների: դասեր բաց թողնելու քմահաճութիւնը ունեցել են թէ ուսուցիչները և թէ վարժուհիները, ամբողջ ձմեռը դասատները բոլորովին չը տաքացնելու պատճառով դասերը տրվել են 30% տաքութիւն ունեցող դասարաններում, հոգաբարձութիւնը ուսումնարանի չեմքն անգամ չը տեսնելու իրաւունքը էր վայելում ամբողջ տարին, ուսուցիչները ուժեղ իր ժամանակին չէ բաժանվել, ուսումնարանի դրամական գործերը երեւի վրա էին թողնված և հոգաբարձութեան անդամները իրանց արդարացնում էին նրանով, որ «միջոց չունէին այդ գործերով պարագլու, որովհետեւ իրանց սեփական գործերն ունէին», և այս բոլորի հետ միասին վերջին ժամանակներս ուսումնարանների գաւթում հրապարակով պատահած կոխը և հայտնաբերումը պակասեցին այն բոլոր չտրիքները, որ տարւայ սկզբից մինչև այսօր պարբերաբար տեղացել էին ուսումնարանների գլխին: Եւ այս բոլորը ոչ տեսնող կայ և ոչ հոգացող: Ժողովուրդն էլ թէև բողոքում է այդ բոլորի դէմ, բայց դեռ խուլ կերպով և համբերութեամբ: Ահաւասիկ այն խուլ պատկերը, որ այսօր ներկայացնում են մեր սիրած ուսումնարանները:

Միթէ այն պաշտօնեան, որը բոլոր ուսումնարանների ղեկը իր ձեռքն է առել և թեմական տեսչի մեծանշան անունն է կրում, պէտք է մնայ առանց պատասխանատւութեան: Եւ միթէ վերջապէս ինքը հասարակութիւնը չը պիտի հոգայ այս բոլորի առաջն առնելու մասին:

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, երկուշաբթի, սրբազան Գրիգորիս Աղուանեան եպիսկոպոսը ներկայացաւ երկրիս կառավարչապետի օդնական կոմս Տատիչչիւին:

Գրիգորիս Աղուանեան եպիսկոպոսը երկուշաբթի օր այցելեց թիֆլիսի Ներսիսեան դպրոցը և դպրոցի տեսուչ պ. Յովհաննէս Սպենդիարեանի հետ խօսակցելուց ու նրանից դպրոցի մասին մի քանի իրան հետաքրքրող տեղեկութիւններ առնելուց յետո՛ւ, այցելեց մի քանի դաստներ, ներկայ մտնվելով դասախօսութիւններին: Ապա իր օրհնութիւնը դպրոցի աշակերտներին տալուց յետո՛ւ, թողեց դպրոցը:

Մենք լսում ենք, որ թիֆլիսում գտնվող դասաւանդական պատգամաւորները պէտք է ներկայանան սրբազան Աղուանեանին, որպէս զի յայտնեն նրան իրանց լրագործութիւնները և ստանան սրբազանից օրոնակ իրաւունք ունենալու ընտրողական ժողովը մոնելու համար:

Յունվարի 6-ի աղետից Նաւալմանների օգտին մեզ ուղարկել են 30 ռուբլի թիֆլիսցի հետեւեալ անձինք: Նիկոլայ Վարդապետի, С. МЕРВИНОВ, Միխայիլ Միխայիլ, Н. СИТОВ, Միխայիլ Բաղդասարեանց, ИВАНЪ КИЗЕВЕРДИ, Գրիգոր Յովհաննէսով, Վասո Խանդավոյ, Ալեքսանդր Մեղուխեան, Միխայիլ Խլանով, Մեդրեանց, Ավանէս Միսաքեանց: Նախկին 543 ռ. 83 կ. դուռնարի հետ ունենք այժմ 573 ռուբլի, 83 կոպէկ:

Հետեւեալ անձինք ուղարկել են մեզ հետեւեալ դուռնարներ Րաֆայէլ Պատկանեանի ընտանիքի օգտին: Մեծ-Վարդապետայից, Ա. Խան-Աղեանց, Ա. Ղուկասեանց, Ա. Քէլեհեանց, Ս. Արսէնեան, Ս. Արսէնեան, Յ. Նալբանդեան, Գ. Եղաբեան, Ն. Նալբանդեան, Գ. Արսէնեան, Ե. Նալբանդեան, Ն. Աղաւան, Բ. Նալբանդեան, Ա. աւագ-Քանայ Տէր-Սիմեոնեանց, Ս. Քանայ Սանդա-տեանց, Յ. Քանայ Միխայիլեանց, Ա. Մէլի-քեանց, Ա. Արսէնեան, Ա. Ալեքսանդրեանց, Յ. Աղաբեան, Ա. Տէր-Միխայիլեանց, Ս. Փէրոյեանց, Կ. Մուրեցեանց, Գ. Արսէնեան, Մ. Աղաբեան, Մ. Նալբանդեանց, Գ. Ռուստամեան, Ա. Աղաբեան, Ե. Քանայեանց, Մ. Խանաբեան, Ա. Արսէնեան, Ս. Ալեքսանդրեանց, Մ. Աղաբեանց, Զ. Աղաբեանց, Ա. Գեորգեան, Գ. Հախնեանց, Մ. Տէր-Յարութիւնեան, Գ. Աղաբեան, Մ. Խալապեան, Գ. Տէր-Յարութիւնեան, Պ. Տէր-Պետրոսեան, Ա. Տէր-Ստեփանեան, Եղ. Տէր-Վաղրէիլեանց, հայ ման և Հ. Տէր-Չարաբեանց (Յ. Մանուկեանց յանձն առաւ դուռնարի պատի ծախսը վճարելու): Ընդամենը 60 ռ. 50 կ. և Ապա թիֆլիսցիական վարչապետ Համարձուկեան ուղարկել է մեզ 2 ռ., թիֆլիսի աշակերտների մի խումբ 6 ռ. 15 կ., աշակերտների մի այլ խումբ 13 ռ., վերջապէս Գետաբեկից, այստեղի ըստմասի տանը հաւաքված հիւրերը իրար մէջ ժողովելով 24 ռուբլի, ուղարկել են մեզ այդ դուռնարը նոյն նպատակով: Ռեբենի նախկին 116 ռ. 85 կ. դուռնարի հետ ունենք այժմ 222 ռ. 50 կոպ. դուռնար:

Յօգուտ Բ. Պատկանեանի ընտանիքի պ. Սահակ Աղաւանց, Մեծ-Վարդապետայից, ուղարկել է մեզ երկրորդ քաղաքացիական վիճակախաղի մի հատ կուզօն:

«Արձագանք» լրագիրը իր անցեալ համարներից միում, Կ. Պոլսում հրատարակվող մի ինչ որ թերթից քաղուածք անելով, հաղորդում է, թէ Ս. Էլմիաճիլի վանքում ծախսարարներ մինչև այժմս լինում էին միտոյից նշանակված միաբաններից, որոնք վարում էին իրանց պաշտօնը ճիշդաբար. բայց այժմս արագան հետախնայի առաջարկութեամբ 1500 ռուբլի ռոճիկով հրաւիրված են երկու աշխարհական ծախսարարներ: Ի վերջոյ թերթին ասում է. «այդ ծախսարարները «Մուրճ» ամսագրի աղագաններն են. «է՛նչ է ուղում դրանով ասել «Արձագանքը»: Յայտնի է, թէ մինչև վերջին ժամանակներս ինչպէս էին վառնում վանքի եկամուտները՝ ծախս խօսքի ասել: Ապացոյց ձեռ «Արարատ» ամսագրի փետրվարի տետրակի հաշիւը, որը շատ պերճաւոր է: Երեկ «Արձագանքը» կամուսն է, որ ինչպէս մինչև այժմս վատնվել են վանքի եկամուտները, այսուհետեւ էլ վատնվին: Երեկ այդ աւելի օգտակար է, քան թէ անտեսարար ծախսելը և անտեսաբան ծախսարարներին տարեկան 1500 ռուբլի ռոճիկ տալը:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Տեղիս ուսուց Բարեգործական ընկերութեան նախագահ պ. Կ. Դանիէլով և մի քանի այլ անձինք, ինդիլը են տալիս, ում հարկն է, որ տեղիս ուսուց օրիորդաց դպրոցը, որը պահվում է վերոյիշեալ ընկերութեան հաշիւով և օրին քաղաքը տալիս է տարեկան 1.000 ռուբլի նպաստ՝ փոխվել իրական պրօգրմնադիպի»:

Մենք ստացանք հետեւեալ հեռագիրը ԲԱԹՈՒՄ քաղաքից. «Ապրիլի 19-ին հառել են Բաթում 5 հոգի հոգեւորական և 5 հոգի աշխարհական թիւրքահայոց պատգամաւորներ, որոնք վաղը ուղևորվելու են թիֆլիս: Չորեքշաբթի օրը դարձեալ կը հասնեն այստեղ 14 պատգամաւորներ»:

Կ. Պոլսի հայոց լրագիրներից քաղում ենք հետեւեալը. «Մշտ ընդհանուր վանահայր-առաջնորդ Ներսէս Ծ. Վարդապետ խաղաղասեան, իբրեւ եկեղեցական պատուիրակ իր վիճակին, անձամբ էջմիածին պիտի երթայ՝ մասնակցելու կաթողիկոսական ընտրութեան: Եղիպտոսի առաջնորդ Գէորգ Ծ. վարդապետ խիթիւնեան, դատական տօներէն յետոյ մայրաքաղաքս պիտի գայ և աստիճ. Էլմիաճիլ պիտի ուղևորվի կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար, իբր եկեղեցական պատգամաւոր Եղիպտոսի վիճակին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍԵՐՍԿԱՆ ՀԳՆԱՍՏԱՄ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ
Խաղաղան, չորսիւ իր փառասեր քաղաքականութեան, ֆինանսական այնպիսի ծանր ճգնաժամ մի մէջ է գտնվում, որ ֆինանսների միջնորդ

Կօլոմբօի հրաժարականից յետոյ, երկար ժամանակ խաղաղ քաղաքական դարձիչներից ոչ մէկը չէր համաձայնվում ֆինանսների միջնորդի պաշտօնը ստանձնել, լաւ հաւանաւոր, որ անհնարին է հաւատարակչութիւն հաստատել խաղաղ ընդդէմի մէջ: Ֆինանսների միջնորդ Կօլոմբօ, իր հրաժարականը պատճառաբանելով ասում էր, թէ չը նայելով, որ խաղաղ 30 միլիոն ընկիւղ ունի, նրա ֆինանսները այն դրութեան մէջ են, որ նա չէ կարող մեծ պետութեան դեր խաղալ և պահել մեծ նաւատորմ ու բազմաթիւ զօրք, առանց նոր հարկեր դնելու ժողովրդի վրա, որն այնպէս էլ դժգոհ է կառավարութեան քաղաքականութիւնից: Մի խօսքով, Կօլոմբօ հաստատում է, որ խաղաղ պէտք է հետո մնայ իր փառասեր ձգտումներից, բաւականանայ փոքրաթիւ զօրքով և նաւատորմով, Ելեյցարիայի և Բելգիայի նման: Միայն այդպիսի մի համաւոր դիրքի մէջ խաղաղ կարող է վճարել իր պարտքերը և կարող է բերել իր ազգային անուստեթիւնը: Սակայն ֆինանսների միջնորդի այդ կարծիքի հետ համաձայն չեն մարկիդ Գիւրուլլին և ուրիշ միջնորդները, և այդ պատճառով ճգնաժամն անխուսափելի դարձաւ: Խաղաղական լրագիրներն ասում են, որ Կօլոմբօի հրաժարականի պատճառով, միջնորդ նախագահի և նրա ամբողջ քաղաքականութեան դրութիւնը շատ դժուարանում է, որովհետեւ նախկին ֆինանսների միջնորդի կողմէ կանգնած է պարտաւնասում մի ազգեցիկ խումբ, որը կարող է այժմ ղեկավարական կուսակցութեան կողմն անցնել:

Այժմ հեռագիրները հաղորդեցին, որ վերջապէս Լուցատի յանձն առաւ ֆինանսների միջնորդի պաշտօնը, այդպիսով ժամանակաւորապէս դժուար դրութիւնից հանելով խաղաղական առաջին միջնորդին:

ՊԱՐՍԿԱՍՏՆ

Թէհրանից «Times» լրագրին հեռագրում են ասելիւ 7-ին (19-ին) հետեւեալը.

«Լուր է տարածվել, որ ուսուց կառավարութիւնը առաջարկում է պարսկական կառավարութեանը կէս միլիոն ֆուճտ ստերլինգ փոխառութիւն, վեց տոկոսով որպէս զի պարսկական կառավարութիւնը հնարաւորութիւն ունենայ վճարել ծխախոտի միջնաւաճառութեան իրաւունքի անդրադարձնելը խելու միասը: Առաջարկութիւնը երեւ կընդունվի, այնպէս որ Պարսկաստանը, ապահովութեան համար միջոցային եկամուտը կը տայ Ռուսաստանին: Պէտք է կարծել, որ այդպիսի պահանջած կէս միլիոն վճարելու Ռուսաստանի կողմից շատ մեծ հետեւանքներ կունենայ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՑ

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 17 ապրիլ: Աշխարհադրական ընկերութեան ընդհանուր ժողովում, նախագահի Մեծ Իշխան Նիկոլայ Միխայիլովիչի ներկայութեամբ, Ն. Մ. Եղաբեկեւիզ զեկուցեց օրիսնեան էկապեղիցիայի հետեւանքների մասին:

ՉԻՍՏՈՒՊ, 17 ապրիլ: Կասեւ դեռը մաքրվեց սառուցից, այստեղ ձմեռող չղիկներն այնօր կազան գնացին:

ՊԱՐԻՉ, 17 ապրիլ: Լրագիրների մեծամասնութիւնը Բաթալիոյ գործի առիթով պախարակում է երդուեաններին նրանց թուլութեան համար: Լրագիրները հաղորդում են, որ այսօր առաւօտ մտադրութիւն կար նոր խուզարկութիւններ անել անարկիտների մօտ, և չոր հրամայված է կալանաւորել նրանցից մի քանիսներին:

ՎԻԵՆՆԱ, 17 ապրիլ: Երէկ հասաւ այստեղ Կօրուրդեան Ֆերդինանդ պրինցը, պրինցը ապա կանն կերթայ դուքս Երստ Կօրուրդեանի ոսկէ հարսանիքին:

ՉԱՆՁԻԲԱՐ, 17 ապրիլ: Դոկտօր Շաուրան 3/15 փետրվարին հասաւ Բուկովա՝ Իմին-փաշայի էկապեղեցիական բաժնի մեծ մասի հետ. նրա դէպի Ունդուկում ընթացքը արգելադրելով սովը և հիւանդութիւնները. Իմին-փաշան հիւանդացաւ և զանդաղութեամբ հետեւում է արշաւաբանի հետ:

ԼՕՄԳՈՆ, 18 ապրիլ: Աֆգանական էմիրի զօրքերը, որոնք զետեղված էին Հէրատի և Բադիսանի մէջ գտնվող երեք գեղերում, ազգաբնակչութեան հետ ընդհարման ժամանակ ծանր պարտու-

